# ԵՐԵՎԱՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՆՎԱՆ

# Հ.168 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՀՀ, 0078, ք.Երևան, Բաշինջաղյան 1-ին նրբ., հեռ. (+374 10) 350 401,էլ. փոստ school168@schools.am, yerevan168dproc@mail.ru


№119

«21» օգոստոս 2023թ.

**ՀՀԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ**

**ԵՐԵՎԱՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՆՎԱՆ Հ.168 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ Գ. ՄԵԼԻՔ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻՑ**

**Հարգելի տիկին Ժ. Անդրեասյան**

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ « Երևանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան հ. 168 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տեղերի ռուսաց լեզու (20 ժամ), երաժշտություն (12 ժամ), անգլերեն (12 ժամ), պատմություն (27 ժամ), տեխնոլոգիա (18 ժամ) առարկաներից ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1 ), մեկ լուսանկար 3 × 4 չափի
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ ( դիպլոմ ):
- Անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում
- Ինքնակենսագրություն
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ–ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական՝ կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված


Մ- 51563-23
22 08 23

փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. օգոստոսի 23-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 05-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 14:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. սեպտեմբերի 12-ին ժամը 14:00, Երևանի հ. 168 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Բաշինջաղյան 1-ին նրբանցք:

Տեղեկությունների համար զանգահարել 010 350401 հեռախոսահամարով:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **տնօրենի ժ/պ Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Երևանի Վազգեն Առաջինի անվան
հ. 168 հիմնական դպրոց
Կատ. Ռ. Հարությունյան
Հեռ. 010 350 401